ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1956 Общественные науки

Վ. Տ. ՍԱՄՎԵԼՅԱՆ «ՆԱԴԵԺԴԱ ՊԱՊԱՅԱՆ»

Հայկական երաժշտական կուլտուրայի պատմության մեջ Նադեժդա Պապայանը հայտնի է որպես համաշխարհային հռչակ ստացած մեծատաղանդ արտիստուհի, որը կարևոր դեր է խաղացել վոկալ-կատարողական և օպերային արվեստի զարգացման ասպարեզում։

Հանդես գալով 19-րդ դարի վերջում, արտիստուհին իր ստեղծագործական գործունեության տասնհինգ տարիների ընթացքում կերտում է բազմաթիվ կերպարներ ռուսական և արևմտաեվրոպական օպերային ստեղծագործություններում։ Նադեժդա Պապայանը օժտված լինելով արտիստուհու հազվագյուտ ձիրքով և ձայնի լայն դիապազոնով միաժամանակ քրտնաջան և համառ աշխատանք էր տանում համաշխարհային երգային մշակույթի նորագույն նվաճումները յուրացնելու ուղղությամբ։ Անընդհատ ընդլայնելով իր ռեպերտուարը նոր գործերով, որոնց թիվը անցնում էր քառասունից, Պապայանը համառորեն խորամուխ էր լինում ամեն մի նոր ստեղծագործության մեջ, անդադար հղկելով նրա բոլոր դարձվածքները, առանձին հնչյունները և ինտոնացիաները։

Սակայն մեծատաղանդ երգչուհու կյանքի և երաժշտական գործունեության մասին մինչև գրախոսվող գրքի հրապարակվելը չի գրվել ոչ մի մոնոգրաֆ աշխատություն։ Այդ բացը լրացնում է Վ. Տ. Սամվելյանի «Նադեժդա Պապայան» խորագրով աշխատությունը, որը լույս է ընծայել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրատարակչությունը։

Գրքի հեղինակը լուրջ դժվարություններ է հաղթահարել երգչուհու կատարողական արվեստը ընթերցող հասարակությանը ծանոթացնելու համար։ Նա երգչուհու ամբողջական պատկերը գծագրելու համար օգտագործել է ոչ միայն ժամանակի հայ և ռուս պարբերական մամուլը, այլև արտիստուհու-ընկերուհիների և բարեկամների նամակները, հուշերը և այլ նյութեր։

Վ. Տ. Սամվելյանը իր գրքում հետաքրքիր ձևով է լուսաբանում Պապայանի երաշժտական գործունեության անցած ուղին։ Ընթերցողի առջև կենդանանում են փոքրիկ Նադյայի վաղ մանկության տարիները հայրենի Աստրախան քաղաքում։ Այնուհետև հեղինակը նկարագրում է, թե ինչպես երիտասարդ արտիստուհին ընդունվում է Պետերբուրգի կոնսերվատորիայի վոկալ ֆակուլտետը և շնորհիվ ռուսական կատարողական ռեալիստական շկոլայի բարերար ազդեցության նրա ձայնական և երաժշտական տվյալները դառնում են ավելի հստակ ու հնչեղ։

Պապայանը այդտեղ յուրացնում է բեմական և վոկալ արվեստի առանձնահատկությունները և կարճ ժամանակամիջոցում հանդես է գալիս կոնսերվատորիայում բեմադրվող կլասիկ օպերաներում, կատարելով Ջիլդայի դերը Վերդիի «Ռիգոլետտո» և Մարգարիտայի դերը՝ Գունոյի «Ֆաուստ» օպերաներում։ Գրքի հեղինակը իրավացիորեն ցույց է տալիս, որ չնայած իր կյանքի մի շարք տարիները Պապայանը արտասահմանում է անցկացրել և ելույթներ է ունեցել Միլանի և Նեապոլի նշանավոր թատրոններում, սակայն նրա արտիստական գործունեությունը հիմնականում սկսվել է Թիֆլիսում 1893 թ. և սերտորեն կապված է եղել հայ կուլտուրական շրջանների հետ։ Եվ դա բնական էր, որովհետև Թիֆլիսը հանդիսանում էր անդրկովկասյան ժողովուրդների թատերա-երաժշտական կենտրոնը։ Այստեղ հաճախակի հանդես էին գալիս Պետերբուրգի կայսերական Մարինսկի թատրոնի գրեթե բոլոր արտիստները, իտալական օպերային խմբերը, հայկական վոկալ արվեստի լավագույն ներկայացուցիչները, որոնք տեղի հանդիսատեսների մեջ սերմանել էին արվեստի բարձր ճաշակ։ Եվ ահա 1893 թ. Թիֆլիսի Արքունական թատրոնում Պապայանը իր բենեֆիսին հանդես է գալիս Վերդիի «Տրավիատա» առաջին գործողությունում, Չայկովսկու «Եվգենի Օնեգինի» երկրորդ գործողության նամակի տեսարանում և Պիետրո Մասկանիի «Գյուղական պատիվ» մեկ գործողությամբ օպերայում, կատարելով Սանտոցցայի պարտիան։

Երգչուհու բենեֆիսն անցավ բացառիկ հաջողությամբ. Թիֆլիսի խստապահանջ երաժշտասեր հասարակությունը ծաղկեփնջերով և բուռն ծափահարություններով է դիմավորում արտիստուհուն։ Այդ օրերին Թիֆլիսի համարյա բոլոր թերթերը Պապայանի խաղը գնահատում են որպես ուրախալի երևույթ և սրտանց շնորհավորում երիտասարդ երգչուհուն։

Անկասկած, լուրջ դժվարությունների է հանդիպում երաժշտագետը, երբ ձեռնամուխ է լինում մի քանի տասնյակ տարվա հեռավորությունից վերականգնել արտիստների ստեղծած կերպարները, և դրանք ամբողջական տպավորությամբ հաղորդել ընթերցողին։

Այդ տեսակետից Վ. Տ. Սամվելյանին հաջողվել է (իհարկե այդ գործում նրան բավական օգնել են Կարա-Մուրզայի ռեցենզիաները) պատկերել Պապայանի ստեղծած կերպարների պատկերասրահը, որոնք եղել են ընդարձակ և հետաքրքրական։

Եվ իրոք, արտիստուհին բացառիկ վարպետությամբ կերտում էր Մարգարիտայի, Ջուլիետայի, Լակմեի, Լիզայի, Տատյանայի, Դեզդեմոնայի, Թամարայի և շատ ուրիշ կերպարներ, որոնք մնայուն արժեքներ են վոկալ արվեստի զարգացման ասպարեզում։ Պապայանը բազմաթիվ կերպարներ մեկնաբանելիս կարողանում էր տարբեր կողմերից ցույց տալ իր ձայնի հնարավորությունները՝ գեղեցիկ տեմբրը, լայն դիապազոնը, նրբերանգների հարստությունը։ Արտիստուհուն հաջողվում էր նաև դերակատարման ընթացքում ունկնդիրներին հաղորդել կոմպոզիտորների մտահղացումները, որոնք երգչուհու թարմ և ուժեղ անհատականության շնորհիվ դառնում են ավելի գեղեցիկ և գյուտիչ։ Պապայան-Տրավիատայի դերակատարումով արտիստուհին այնքան է համակում հանդիսատեսին, որ ինչպես Կարա-Մուրզան է գրում «Ակամա հարց է բարձրանում մթթե սրանից, ավելին էլ լինում է աշխարհում»։

Վ. Տ. Սամվելյանի գրքի կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ հեղինակը իր աշխատության մեջ վերլուծում է նաև Պապայանի կամերային ռեպերտուարը։ Հեղինակը ցույց է տալիս, որ երգչուհին մեծ ճաշակով էր կատարում Չայկովսկու, Ռուբինշտեյնի, Իպոլիտով-Իվանովի և այլ կոմպոզիտորների երգերն ու ռոմանսները։ Բացի ռուսական և եվրոպական կլասիկ երաժշտությունից նրա համերգների ծրագրերում հաճախ իրենց պատվավոր տեղն են ունեցել հայ ժողովրդական երգերը, որոնք երգչուհին կատարում էր ոչ միայն Թիֆլիսում այլև Պետերբուրգում, Միլանում, Փարիզում, Լոնդոնում և բոլոր այն վայրերում, որտեղ հնչում էր նրա աքանչելի ձայնը։

Պապայանը մեծ սիրով և առանձին ջերմությամբ էր կատարում «Հազար երանի», «Օհ ինչ անուշ», «Կռունկ», «Մայր Արաքսի ափերով», «Հերիք որդյակ», «Երբ որ բացվես», «Ջիմ գլխին», «Բոյդ բարձր», «Օրորոցի երգ», «Պաղ աղբյուրի մոտ», «Լորիկ» երգերը, հարազատ մնալով հայ լեզվին, հայ երաժշտությանը, ինտոնացիոն կարգին, մելոդիկ հստակությանը։

1906 թ. երբ Պապայանը գտնվում էր իր գործունեության ծաղկման շրջանում, ողբերգական մահը ընդհատեց նրա բեղմնավոր և հիասքանչ կյանքի թելը։

Վ. Տ. Սամվելյանի «Նադեժդա Պապայան» գիրքը մի հետաքրքրական էջ է հայ երաժշտության պատմության լուսաբանման գործում։ Հեղինակին հաջողվել է վերարտադրել Պապայանի արտիստական դիմանկարը իր ստեղծագործական բարձր ու հմայիչ առանձնահատկություններով։ Սամվելյանի գիրքը կարդացվում է հետաքրքրությամբ։ Վաղաժամ մահը հնարավորություն չտվեց հեղինակին, գրքում բերված հարուստ նյութի ընձեռած հնարավորություններով գրելու ավելի ծավալուն մենագրություն, սակայն այն, ինչ թողեց ընկ. Սամվելյանը, արժեքավոր է, գրված ջերմ շնչով, վարակող հայրենասիրությամբ։

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ